


## ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ



### Մարզկենտրոնը՝

ք. Հրազդան

### Տարածաշրջանները՝

Հրազդան,

Կոտայք,

Նաիրի

### Քաղաքները՝

Հրազդան,

Աբովյան,

Չարենցավան,

Եղվարդ,

Բյուրեղավան,

Նոր Հաճն,

Ծաղկաձոր

Տարածքը	2 086 քառ.կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.0 %
Քաղաքային համայնքներ	7
Գյուղական համայնքներ	60
Քաղաքներ	7
Գյուղեր	62
Բնակչության թվաքանակը 2013թ. տարեվերջին	255.0 հազ.մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	138.2 հազ.մարդ
գյուղական	116.8 հազ.մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2013թ.	8.5%
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	54.2%
Գյուղատնտեսական նշանակության հողեր	154 639.2 հա
այդ թվում՝ վարելահողեր	37 818.7 հա

**ՀՀ Կոտայքի** մարզը գտնվում է հանրապետության կենտրոնում: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ ՀՀ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

**ՀՀ Կոտայքի մարզի** տարածքով են հոսում Հրազդան և Ազատ գետերը: **Հրազդան գետը** (նախկին անվանումը՝ Զանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Գետի համակարգում կա 340 վտակ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկաձորը, Արայի գետը, Գետառը:

**Ազատ գետը** նույնպես Արաքսի ձախ վտակներից է (երկարությունը՝ 55 կմ): Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայից (հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով): Գետի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման նպատակով:

**Մարզը** հարուստ է հանքային ջրերով, դրա վկայությունն են «Բջին» և «Արգնի» հանքային ջրերը:

Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, Հատիս և Արայի լեռները: Հատիս լեռը (նախկին անվանումը՝ Շամիրամի) կոնաձև հրաբխային զանգված է (բարձրությունը՝ 2 528 մ): Լեռը ծածկված է մարգագետնատափաստանային բուսականությամբ:

**Արայի լեռը** (բարձրությունը՝ 2 577 մ)՝ հանգած հրաբխային զանգված է, գտնվում է Արագած լեռից արևելք՝ Քասախ և Հրազդան գետերի միջև:

**Մարզի** հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1 200 – 1 300 մ բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1 700 – 1 800 մ բարձրության վրա):

**Մարզի** տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան–Սևան ավտոմայրուղին և Երևան–Հրազդան–Իջևան երկաթգիծը:

2013թ.-ին **մարզի տնտեսության** հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 13.4 %,
- գյուղատնտեսություն՝ 6.1 %,
- շինարարություն՝ 6.4 %,
- մանրածախ առևտուր՝ 3.1 %,
- ծառայություններ՝ 3.5 %:

**ՀՀ Կոտայքի մարզը** համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է:

**Մարզի տնտեսության** ընդհանուր ծավալում գերակշռողն **արդյունաբերությունն է**: Մարզը բացառիկ դեր ունի հատկապես էներգետիկայի բնագավառում: Այստեղ են գտնվում էլեկտրաէներգիայի արտադրության 2 խոշոր կազմակերպություն:

**Մարզի արդյունաբերության** մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ճյուղերը.

- ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և

պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն),

բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

գ) մետաղագործական արդյունաբերություն և մետաղե արտադրատեսակների արտադրություն (պողպատի և թուջի ձուլում),

դ) կահույքի արտադրություն, այլ կատեգորիաների մեջ չմտցված պատրաստի իրերի արտադրություն (ոսկերչական իրերի և կից ապրանքների (ադամանդի) արտադրություն):

**Մարզի գյուղատնտեսությունը** մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ:

**Բեռնաուղևորափոխադրումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրա-տրանսպորտով (ճոպանուղի):

**Արմյան քաղաքը** (2013թ. տարեվերջին՝ 44.0 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 18 կմ հեռավորության վրա: Հանրապետության ամենաարագ աճող քաղաքներից է, արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն է**, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում զարեջրի արտադրությունը:

**Բյուրեղավան քաղաքի** (2013թ. տարեվերջին՝ 9.5 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 24 կմ հեռավորության վրա) արդյունաբերության հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն է**, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ապակե տարայի, ճենապակուց և հախճապակուց տնտեսական կենցաղային արտադրատեսակների արտադրություններ):

**Եղվարդ քաղաքը** (2013թ. տարեվերջին՝ 11.8 հազ. բնակիչ) գտնվում է Արայի լեռան հարավային ստորոտում, հեռավորությունը Երևանից 18 կմ է:

Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (թորած ալկոհոլային խմիչքների (կոնյակի), կաթնամթերքի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրությունը):

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև **գյուղատնտեսությունը**, որի մեջ հիմնական ուղղությունը հացահատիկի մշակությունն է:

**Նոր Հաճն քաղաքի** (2013թ. տարեվերջին՝ 9.4 հազ. Բնակիչ, հեռավորությունը Երևանից 30 կմ է) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրությունը (ոսկերչական արտադրատեսակների (ադամանդի) արտադրությունը):

**Հրազդան քաղաքի** (2013թ. տարեվերջին՝ 41.8 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 50 կմ է: Գտնվում է Հրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Այստեղ է գտնվում Հրազդանի ՋԷԿ-ը, որը հզորագույնն է ՀՀ-ում: Արդյունաբերության մյուս ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (մասնա-


վորապես՝ ցեմենտի արտադրություն):

**Չարենցավան քաղաքը** (2013թ. տարեվերջին՝ 20.5 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 36 կմ հեռավորության վրա, Հրազդան գետի ձախ ափին: 1953թ. ՀԷԿ-ի շինարարության ավարտից հետո քաղաքում կառուցվեցին մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ և Չարենցավանը դարձավ հանրապետության կարևոր արդյունաբերական կենտրոն:

**Քաղաքի արդյունաբերության** հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի մետաղագործական արդյունաբերությունը և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը (պողպատի և թուջի ձուլում):

**Ծաղկաձոր քաղաքի** (2013թ. տարեվերջին՝ 1.2 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 55 կմ հեռավորության վրա) կլիման մեղմ է և առողջարար: Առողջարանային քաղաք է:

**ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2014թթ. հունվարի 1-ի դրությամբ**



**ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ**

	Քանակը				
	2009	2010	2011	2012	2013
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	1 618	1 635	1 587	1 545	1 347
<i>այդ թվում՝</i>					
խանութներ	711	747	792	841	804
կրպակներ	848	826	735	645	484
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	3	3	3	2	2
սպառողական ապրանքների շուկաներ	5	6	5	5	5
առևտրի այլ օբյեկտներ	51	53	52	52	52

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	<b>Քանակը</b>				
	<b>2009</b>	<b>2010</b>	<b>2011</b>	<b>2012</b>	<b>2013</b>
Պետական նախադպրոցական	50	50	48	52	54
Պետական հանրակրթական	105	105	104	104	104
Ոչ պետական հանրակրթական	3	1	1	1	1
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	25	24	24	24	24
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական <sup>1</sup>	6	6	6	6	6
Պետական միջին մասնագիտական ուսումնական	6	6	6	6	6
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	2	2	2	2	2

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

<b>Համայնքի անվանումը</b>	<b>Բնակավայրի անվանումը</b>	<b>Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *</b>
Հրազդան	ք. Հրազդան	41 764
Աբովյան	ք. Աբովյան	44 021
Չարենցավան	ք. Չարենցավան	20 470
Եղվարդ	ք. Եղվարդ	11 792
Բյուրեղավան	ք. Բյուրեղավան	9 483
Նոր Հաճն	ք. Նոր Հաճն	9 367
Ծաղկաձոր	ք. Ծաղկաձոր	1 250

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

	<b>Համայնքի անվանումը</b>	<b>Բնակավայրի անվանումը</b>	<b>Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ**</b>
1	Այափարս		2 336
2	Ակունք		2 194
3	Աղավնաձոր		1 287
4	Առինջ		5 901
5	Արագյուղ		1 140
6	Արամուս		3 711
7	Արգել		3 351
8	Արզական		2 752
9	Արզնի		2 467
10	Արտավազ	•Արտավազ •Փյունիկ	1 102
11	Բայառույիտ		3 535
12	Բջնի		2 888
13	Բուժական		1 748

<sup>1</sup> Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ**
14	Գառնի		7 494
15	Գեղաղիբ		738
16	Գեղաշեն		3 998
17	Գեղարդ		379
18	Գետամեջ		786
19	Գետարգել		845
20	Գողթ		2 055
21	Զառ		1 534
22	Զովաշեն		170
23	Զովունի		5 641
24	Զովք		1 023
25	Զորավան		1 656
26	Թեղենիք		583
27	Լեռնանիստ		2 864
28	Կաթնաղբյուր		741
29	Կամարիս		2 422
30	Կապուտան		1 275
31	Կարենիս		859
32	Կոտայք		2 001
33	Հանքավան		103
34	Հատիս		295
35	Հացավան		620
36	Զորաղբյուր		2 553
37	Մայակովսկի		2 140
38	Մարմարիկ		862
39	Մեղրաձոր	• Մեղրաձոր • Գոռգոչ (Կորյուն)	2 622
40	Մրգաշեն		2 187
41	Նոր Արտամետ		1 207
42	Նոր Գեղի		6 089
43	Նոր գյուղ		1 531
44	Նոր Երզնկա		1 874
45	Նուռնուս		632
46	Ողջաբերդ		1 019
47	Պռոշյան		5 594
48	Պտղնի		1 628
49	Ջրաբեր		447
50	Ջրառատ		571
51	Ջրվեժ		6 408
52	Սարայանջ		373
53	Սոլակ		2 483
54	Սևաբերդ		286
55	Վերին Պտղնի		730
56	Քաղսի		2 481
57	Քանաքեռավան		3 720
58	Քասախ		5 721
59	Քարաշամբ		700
60	Ֆանտան		1 080

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2013թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10 000	5 151	4 849
Ծնվածներ, մարդ	143	68	75
Մահացածներ, մարդ	88	42	46
Ամուսնություններ	64	X	X
Ամուսնալուծություններ	11	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավայրերում, քառ.մ	28.0	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	251	123	128
հանրակրթական	1 315	629	686
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	154	102	52
նախնական մասնագիտական (արհեստագործական)	28	7	21
միջին մասնագիտական	52	21	31
բարձրագույն մասնագիտական	16	9	7
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	33 640	...	...
Մարզիկներ, մարդ	187	15	172
Զբաղվածներ, մարդ	3 958	1 618	2 340
նրանցից՝ գիտական հիմնարկներում	0.0	0.0	0.0
նրանցից՝ գիտության դոկտոր	0.0	-	0.0
գիտության թեկնածուներ	0.0	0.0	0.0
ուսուցիչներ	124	106	18
բժիշկներ	19	...	...
միջին բուժանձնակազմ	44	...	...
Գործազուրկներ, մարդ	1 013	413	600
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 537	...	...
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	379	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	20 127	...	...
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	489	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	55	X	X
այդ թվում՝ նշ մեծ ծանրության	24	X	X
միջին ծանրության	20	X	X
ծանր	10	X	X
առանձնապես ծանր	1	X	X

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են: